

Հիմնական միջոցներ

- Ձև 2 Հիմնական միջոցներին ներկայացվող պահանջներ
- 23 Հիմնական միջոցներին ներկայացվող պահանջները տեղի են ունենում հացահատիկի արտադրության մեջ՝ ֆերմայի մեքենա-մեխանիզմների և շենք-շինությունների (գոմ, պահեստ, արհեստանոց) մասով:
- Ձև 2 Հաշվարկման օրինակում մեքենա-մեխանիզմների օգտագործումը տարբերակվել է ըստ 32-33 աշխատանքային հատուկ գործելակերպի: Այս եղանակով հնարավոր է որոշել 1 հա հացահատիկի մեկ հիմնական հացահատիկով հաստատուն ծախսերում ներդրված միջին կապիտալի համամասնական պահանջը և միևնույն ժամանակ որոշել համամասնական հաստատուն ծախսերը:
- Գործնականում, սովորաբար օգտագործվում են ստանդարտ թվեր աղյուսակներից (KTBL)՝ բարդ հաշվարկների փոխարեն: Օրինակի հաշվարկում մեքենա-մեխանիզմներում/հիմնական միջոցներում ներդրված միջին կապիտալը ըստ 1 հա աշնանացան ցորենի համար (որոշվում է համամասնորեն)՝ 523.7 € մեկ հա և ըստ տարեկան հաշվարկով: Քանզի մեքենա-մեխանիզմների մնացորդային արժեքը չի ներառված հաշվարկների մեջ, ուստի այն հաշվառվում է որպես համամասնորեն ներդրված գումար՝ 1,047 € մեկ հա (= 0 հիմնական միջոցներ * 2)

3.5.2 Հիմնական միջոցների ծախսեր

Հիմնական միջոցները ֆերմայում օգտագործվում են երկար ժամանակահատվածում և, հետևաբար,

կորցնում են իրենց արժեքը: Հաստատուն ծախսերը ներառում են համապատասխանաբար մաշվածությունը, երբ կիրառելի սպասարկումը, ապահովագրությունը (ավտոտրանսպորտային միջոցների), հարկերը (ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք կիրառելի չեն, եթե օգտագործվում են միայն գյուղատնտեսական նպատակներով), ինչպես նաև կապիտալի ծախսեր (կապիտալի գծով հաշվարկային ծախսեր, որի հաշվարկն իրականացվում է այնպես, ինչպես ընթացիկ ակտիվների համար): Վերջիններս հաշվարկվում են միջին օգտագործված կապիտալի համար, որը սովորաբար հաշվարկվում է որպես գնման գնի 50%-ի չափով (մնացորդային արժեք չի ենթադրվում):

26-2 Տարեկան մաշվածության և միջին տարեկան կապիտալի այլընտրանքային արժեքի հետևյալն է (A = ձեռքբերման գինն է).

Տարեկան մաշվածություն.

A / ժամանակահատված արտահայտված տարիներով
(կամ: $A \times$ մաշվածության տոկոս)
մնացորդային արժեքով (Rw):
 $(A - Rw) \times$ մաշվածության տոկոս
Մաշվածության տոկոս (%) = $1 /$ ժամանակահատված արտահայտված

Կապիտալի այլընտրանքային

տարեկան արժեք.

$A / 2 \times$ համարժեք նպատակային դրույքաչափ (*տարբերակված համապատասխանաբար ըստ սեփական և փոխառու կապիտալների*)
մնացորդային արժեքով (Rw): $(A + Rw) / 2 \times$ համարժեք նպատակային դրույքաչափ

26-29 Բույսերի արտադրության գործընթացում համամասնորեն հաստատուն և վերադիր ծախսերի բաշխման գործընթացը դժվար է, քանի որ մեքենա-մեխանիզմները օգտագործվում են ոչ միայն մեկ հատուկ տեսակի արտադրության համար: Իբ ձևում ներկայացված է սեփական մեխանիզացիայի համար հաստատուն ծախսերի մոտավոր համամասնորեն որոշման հնարավորությունը (բացատրություններով):

Եթե առկա է հիմնական միջոցների օգտագործման այլընտրանքային հնարավորություն, ապա առաջանում են այլընտրանքային ծախսեր: Հաշվարկը հիմնված է այլընտրանքային օգտագործման կորցրած արժեքի վրա: Հիմնական միջոցների դեպքում հնարավոր վարձավճարի վճարումը կամ հիմնական միջոցների վաճառքով խնայված հիմնական ծախսերը կարող են օգտագործվել որպես հիմք այդպիսի հաշվարկման համար: